Արձանագրություն N 2

<<ՀՀՔՊԿ-ԳՀԾՁԲ-17/2>> ծածկագրով ՀՀ ոստիկանության Շիրակի ՄՎ Կումայրիի ՈԲ-ի, ՃՈ-ի Շիրակի մարզային ՀՔԲ, Շիրակի մարզային ՃՈ-ի, ՊՊԳՎ կառուցման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 04.10.2017թ
ժամը 11:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Ս. Մաթևոսյան

Հանձնաժողովի անդամներ՝ Վ. Առաքելյան/ գնահատող /
Ա. Քոչարյան /գնահատող/
Ն. Մարտիրոսյան/ բացող /
Ն. Մանուկյան/ բացող /

Հանձնաժողովի քարտուղար՝ Տ. Վասիլյան

1. Տեղեկություններ <<ՀՀՔՊԿ-ԳՀԾՁԲ-17/2>> ծածկագրով գնման ընթացակարգին ներկայացված հայտերի բացման մասին

(Ս. Մաթևոսյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ

ա) Գնման ընթացակարգի հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով հրավերով սահմանված օրը և ժամին՝ 2017 թվականի հոկտեմբերի 04-ին, ժամը 11:00-ին:

բ) Գնման առարկայի նախահաշվային արժեքը կազմում է 7 000 000 (յոթ միլիոն) ՀՀ դրամ:

գ) Գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

ՀՀ դրամ

Հ/Հ	*Մասնակցի անվանումը*	*Հասցե*	*Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի գումարը)*	*ԱԱՀ*	*Առաջարկված ընդհանուր գինը*
1	<<ՀՀ նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն>> ՓԲԸ	Հալաբյան 41 ա	250 000	50 000	300 000
2	<<ՄԱՌՔ>> ՍՊԸ	ք. Երևան, Կոմիտասի պող. 54Վ, տարածք 304	950 000	-	950 000
3	<<Վահրամ Կնյազյան>> ԱՁ և <<Տամո-Շին>> ՍՊԸ կոնսորցիում	ՀՀ Շիրակի մարզ, ք. Արթիկ, Բաղրամյան փող. 12, բն 2 ք. Երևան, Արաբկիր 19, 11Ա	2 400 000	-	2 400 000

4	<<Մովսես Շինարար>> ՍՊԸ	-	-	-	-

դ) Հայտերի ուսումնասիրության արդյունքում հանձնաժողովը որոշում է.

- <<Մովսես Շինարար>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը մերժել, քանի որ հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը armeps համակարգում կցված չեն:

- <<Վահրամ Կնյազյան>> ԱՁ և <<Տամո-Շին>> ՍՊԸ կոնսորցիումի կողմից ներկայացված հայտը մերժել, քանի որ կողմերի համատեղ գործունեության պայմանագիրը ստորագրվել է ավելի ուշ, քան հրավերով պահանջվող մնացած փաստաթղթերը, այսինքն վերջիններս ստորագրվել են դեռևս գոյություն չունեցող կոնսորցիումի կողմից:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5 դեմ - 0:

2. Տեղեկություններ <<ՀՀՔՊԿ-ԳՀԾՁԲ-17/2>> ծածկագրով գնման ընթացակարգի առաջին և հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակիցների մասին

(Ս. Մաթևոսյան)

2.1 Հիմք ընդունելով ընթացակարգի մասնակիցների կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը և ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետը՝ գնահատող հանձնաժողովի կողմից էլեկտրոնային համակարգի միջոցով հայտերը գնահատվել են հետևյալ հերթականությամբ և հետևյալ կերպ.

Մրցույթում զբաղեցրած տեղը	*Մասնակցի անվանումը*	*Հայտի գնահատականը*
1	<<ՀՀ նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն>> ՓԲԸ	բավարար
2	<<ՄԱՌՔ>> ՍՊԸ	բավարար
-	<<Վահրամ Կնյազյան>> ԱՁ և <<Տամո-Շին>> ՍՊԸ կոնսորցիում	անբավարար
-	<<Մովսես Շինարար>> ՍՊԸ	անբավարար

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5 դեմ - 0:

3. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնելու և առաջին տեղ զբաղեցրած մասնակցին ծանուցելու մասին

(Ս. Մաթևոսյան)

3.1 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 43-րդ կետի 3-րդ և 4-րդ ենթակետերը՝ հանձնաժողովը որոշեց

- Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել գնման ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած <<ՀՀ նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն>> ՓԲԸ-ի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով <<ֆինանսական միջոցներ>> որակավորման

չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

- Ծանուցել 1-ին տեղ զբաղեցրած <<ՀՀ նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն>> ՓԲԸ-ին ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը: Սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովի կողմից կմերժվի առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ կներկայացվի հաջորդ տեղ զբաղեցնող մասնակցին:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0:

4. <<ՀՀՔՊԿ-ԳՀԾՁԲ-17/2>> ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Ս. Մաթևոսյան)

4.1 Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել 2017 թվականի հոկտեմբերի 11-ին ժամը 15:00-ին ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեում, ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3, IV հարկ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5 դեմ - 0:

Հանձնաժողովի
Նախագահ՝ ---------- Ս. Մաթևոսյան

Անդամ՝ ---------- Վ. Առաքելյան

---------- Ա. Քոչարյան

---------- Ն. Մարտիրոսյան

---------- Ն. Մանուկյան

Արձանագրությունը կազմեց
Հանձնաժողովի քարտուղար՝ ---------- Տ. Վասիլյան